ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1016-Ա « 15 » մարտի 2024 թ.

ՀԱՂԹԱՆԱԿ ԹԻՎ 11-9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Վիգեն Թադևոսյանի դիմումը՝ Հաղթանակ թիվ 11-9 հասցեում գտնվող հողամասի /վարելահող/ սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել հողի սեփականության իրավունքի 30.01.1995թ. հ.Ա012435 պետական ակտը և ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.16306, հ.16307 վկայագրերը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հաղթանակ թիվ 11-9 հասցեում գտնվող վարելահող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 2198.55քմ պետական ակտում ամրագրված՝ 2200.0քմ մակերեսի փոխարեն:

Քննարկվող հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2 և 3 կետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշման հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցման սխեմայի՝ գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 12-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-109933-23 եզրակացությունը.

1.Սահմանել, որ Հաղթանակ թիվ 11-9 հասցեում գտնվող հողի սեփականության իրավունքի 30.01.1995թ. հ.Ա012435 պետական ակտի հիման վրա օրենքի ժառանգության իրավունքի հ.16306, հ.16307 վկայագրերով Վիգեն Թադևոսյանին փոխանցված հողամասի (վարելահող) փաստացի մակերեսը կազմում է 2198.55քմ, որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ